

**ՓԱՍՏԱՔԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՍԿՈՒՄ Է ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄՍՎԱ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐԸ**

25.09.2014 06:33



Հարգելի՛ փաստաբաններ,  
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը հրավիրում է մասնակցելու 2014 թվականի սեպտեմբեր ամսվա վերապատրաստման դասընթացներին:

Նկատի ունենալով այն, որ ինտենսիվ դասընթացները սկսվել են 2014 թվականի հուլիսի 1-ից, ՀՀ փաստաբանների պալատը 2014 թվականի համար յուրաքանչյուր փաստաբանին, որպես պարտականություն, հաշվեգրելու է վերապատրաստման 12 ակադեմիական ժամ (փաստաբանն իր ցանկությամբ կարող է 24 ժամը լրացնել):

Հաշվի առնելով այն, որ հիմնականում աշխատանքային օրվա ավարտին է դասընթացը լինելու, ՀՀ փաստաբանների պալատը տրամադրելու է Ձեզ սուրճ, թեյ և թեթև սնունդ:

Գրանցվելու համար կարող եք էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկել [ani.gharibyan@advocates.am](mailto:ani.gharibyan@advocates.am) էլ. հասցեին՝ նշելով Ձեր արտոնագրի համարը և հեռախոսահամարը:

Հ.Գ. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/6-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման դասընթացներ անցնելու ժամաքանակի և կարգի համաձայն՝ Փաստաբանի վարքագծի կանոնները (դեոնթոլոգիա)» թեմայով դասընթացների առնվազն 3 ժամ մասնակցությունը պարտադիր է: ([http://advocates.am//images/palati\\_xorhridi\\_voroshumner/Voroshum-xorh-3-6-karg-verapatrastum.pdf](http://advocates.am//images/palati_xorhridi_voroshumner/Voroshum-xorh-3-6-karg-verapatrastum.pdf) )

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
վերապատրաստման հարցերով համակարգող՝  
Անի Ղարիբյան

[ani.gharibyan@advocates.am](mailto:ani.gharibyan@advocates.am)  
+37410 600 704

Բեռնել դասընթացների ժամանակագրությունը